

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատանքային այցը Ֆրանսիա

15.10.2013



ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի գլխավորած պատվիրակության կազմում գտնվում է Ֆրանսիայում: 2013 թվականի հոկտեմբերի 15-ին պատվիրակության անդամները հյուրընկալվել էին Լիոնի քաղաքապետարանում, Ռեոն Ալպեր նահանգի շրջանային խորհրդում և Վալանսի քաղաքապետարանում: Հայաստանի համայնքների միության և Ռեոն Ալպեր նահանգի շրջանային խորհրդի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով նախատեսվում է Ռեոն Ալպեր նահանգի կողմից բազմաթիվ ծրագրերի իրականացում ՀՀ մի շարք համայնքներում, այդ թվում ՀՀ Վայոց ձորի մարզում: Մասնավորապես, նախատեսվում են ծրագրեր իրականացնել գյուղատնտեսության, զբոսաշրջության և կրթության ոլորտներում: ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը 2013 թվականի հոկտեմբերի 16-ին և 17-ին Ֆրանսիայի Վալանս քաղաքում կմասնակցի հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովի աշխատանքներին: